ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 39

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Քանաքեռավան համայնքի 2021թ. մայիսի 17-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով

1.Քանաքեռավան համայնքի 2020թ, դեկտեմբերի 16-ի թիվ 58-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Քանաքեռավան համայնքի 2021թ. աճուրդների կազմակերպման կանոնակարգը հաստատելու մասին

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդային վաճառքի միջոցով օտարելու և այդ հողերի աճուրդային վաճառքի մեկնարկային գինը հաստատելու մասին

4. Համայնքային սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 40-Ն

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Քանաքեռավան համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 16-ի << Համայնքի 2021թ. բյուջեն հաստատելու մասին>> թ. 58-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Քանաքեռավան համայնքի ավագանու
2021թ մայիսի 17-ի N 40-Ն որոշման

1-6-1 /հանրային/

1-6-1 ծրագիրի 4241 հոդվածի 500 թիվը փոխարինել 1500

1-6-1 ծրագիրի 4239 հոդվածի 1000 թիվը փոխարինել 0

4-2-4 /Ոռոգում/

4-2-4 ծրագրի 4251 հոդվածի 1500 թիվը փոխարինել 500

10-4-1 /Ընտանիքի անդամներ և զավակներ/

10-4-1 ծրագրի 4723 հոդվածի 300 թիվը փոխարինել 1000

8-2-3 ծրագրի 4729 հոդվածի 600 թիվը փոխարինել 900

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 41

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հրապարակային սակարկությունների մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2004 թվականի հուլիսի 8-ի թիվ 172-ն հրամանով հաստատված աճուրդների անցկացման կանոնակարգը

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Քանաքեռավան համայնքի 2021թ. աճուրդների կազմակերպման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Քանաքեռավան համայնքի ավագանու 2021

թվականի մայիսի 17-ի թիվ 41 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող անշարժ գույքի (հետագայում՝ գույք) աճուրդով օտարման աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ) գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի ղեկավարը:

3. Աճուրդի կազմակերպիչը ղեկավարվում է «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի ավագանու որոշումներով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդի դրված գույքի(գույքերի) համար սահմանվում է մեկ լոտ:

5. Աճուրդը անցկացվում է սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

6. Աճուրդն անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Քանաքեռավան համայնք, 13-րդ փողոց, 4-րդ նրբանցք շենք թիվ 2):

7. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը , որը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի համաձայն:

8. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարկվում է մամուլով, զանգվածային լրատվության այլ միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև առկայության դեպքում համայնքի պաշտոնական կայքէջում՝ աճուրդի կայացման օրվանից մեկ ամիս առաջ:

9. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերվում տեղադրվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում՝ ցուցատախտակի վրա:

10. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

11. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանվում է 5000 (հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Աճուրդին կարողեն ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (Դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար (Դիտորդի) մուտքի տոմսի վճարը սահմանվում է 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

13.Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդները), աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

14.Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1)չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2)չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

3)հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ առանց աճուրդավարի թույտվության,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը (աճուրդի մասնակիցների համար):

15. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի ավագանու որոշումներով:

16. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

17. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է «Աճուրդի մասնակցի վկայական>>.

18. Աճուրդի նախավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին՝ աճուրդի անցկացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

19. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային առաջարկ:

20. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում աճուրդի մասին հրապարակայի ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող 3 օրը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00 - 17:00 ընկած ժամանակահատվածում /բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի/, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքում, 13-րդ փողոց, 4-րդ նրբանցք, շենք թիվ 2 հասցեում:

21.Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Քանաքեռավանի համայնքապետարանում՝ մինչև աճուրդի կայացման նախորդ 3 օրը ժամը 9:00-ից մինչև 17:00-ն:

22. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմանը թույլատրում է մասնակցել Աճուրդին:

23. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները, աճուրդի հաղթող մասնակիցը, ցանկության դեպքում՝

24. աճուրդի մյուս մասնակիցները (մասնակիցը):

25. աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

26. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

27. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և (կամ) գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

28. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված և գույքը գնած մասնակցի կողմից:

29. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին (մասնակիցներին) վերադարձվում է նախավճարը

30. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են մինչև աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող երրորդ աշխատանքային օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 9:00 - 17:00 ընկած ժամանակահատվածում /բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի/, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքում, 13– րդ փողոց, 4-րդ նրբանցք ,շենք թիվ 2 հասցեում, աճուրդային հանձնաժողովի կողմից:

31. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1)հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2)ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

3)իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4)նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորրագիրը:

32. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

33. Աճուրդում վաճառված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

34. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1) չի ներկայացել որևէ գնորդ:

2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

3) աճուրդում հաղթած անձը չի կնքել առք ու վաճառքի պայմանագիր և /կամ/ չի մուծել գնման գինը:

35. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

36. Աճուրդը և կրկնաճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպում և անցկացնում է սույն կանոնակարգի և/կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

37. Սույն կանոնակարգի կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:Աճուրդի մասնակիցների մասին տեղեկատվությունները հրապարակման ենթակա չեն:

III . ԱՃՈՒՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

38.Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

39. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

40. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

41. Աճուրդավարը և արձանագրողը նշանակվում են աճուրդի կազմակերպչի որոշմամբ:

42. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

Աճուրդի մասնակիցների մասին տեղեկատվությունները հրապարակման ենթակա չեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 42

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Տալ թույլտվություն աճուրդային վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածությունները և հաստատել այդ հողերի աճուրդային վաճառքի մեկնարկային գները ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված

Քանաքեռավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 17-ի թիվ 42 որոշումով

Հավելված համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածությունները աճուրդային վաճառքով օտարելու և աճուրդային վաճառքի մեկնարկային գները սահմանելու

Լոտ	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն	Չափը հա	Հողատեսքի գնահատման խումբ	Կադաստրային ծածկագիրը	Մեկնարկային գինը դրամ	Նախավճարի չափը դրամ	Քայլի նվազագույն չափը դրամ	Սահմանափակումներ	այլ նշումներ				
										ճանապարհ	ջրատար	կոյուղի	էլ. հաղորդման գիծ	գազատար
1	գյուղատնտեսական	այլ հողատեսք	0.6444	0	07-064-0326-0013	435000	217500	21750	Չկան	դաշտամիջյան	առկա է	առկա է	առկա չէ	առկա չէ
2	գյուղատնտեսական	վարելահող	0.59844	4	07-064-0292-0002	2127600	1063800	106380	Չկան	դաշտամիջյան	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա է
3	գյուղատնտեսական	արոտավայր	1.75221	4	07-064-0355-0039	532500	266250	26625	Չկան	դաշտամիջյան	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ
4	գյուղատնտեսական	վարելահող	1.12524	4	07-064-0303-0006	1600200	800100	80010	Չկան	դաշտամիջյան	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ
5	գյուղատնտեսական	խաղող	0.4037	4	07-064-0303-0004	660000	330000	33000	Չկան	դաշտամիջյան	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ
6	գյուղատնտեսական	արոտավայր, վարելահող	11.0634	5	07-064-0244-0055	2241000	1120500	112050	Չկան	դաշտամիջյան	առկա է	առկա չէ	առկա չէ	առկա չէ
7	գյուղատնտեսական	վարելահող	0. 3771	4	07-064-0318-0006	670500	335250	33525	Չկան	դաշտամիջյան	առկա չէ	առկա չէ	առկա չէ	առկա չէ

Համայնքի ղեկավար Հայկ Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 43

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով <<Արխիվային գործի մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Քանաքեռավանի համայնքապետարանի 2011-2015 թվականների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**